




# COVID-19-ի դեմ Պատվաստում Ի՞նչ Պետք Է Իմանան Երեխաները

## ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ

### Այո՛:



12 տարեկան և ավելի մեծ  
ԼԻԱՐԺԵՔ ԴԵՂԱԶԱՓ

- Եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի մեծ, դուք ստանում եք միևնույն **Pfizer** պատվաստանյութը, ինչ մեծահասակները: (5-11 տարեկան երեխաները ստանում են ավելի քիչ չափաբաժնով տարբերակը):
- Պատվաստանյութը տրվում է որպես **2 դեղաչափից բաղկացած հիմնական շարք**՝ 3-8 շաբաթ տարբերությամբ: Դրան գումարվում է **խթանիչ դեղաչափը**՝ 5 ամիս անց:
- Պատվաստանյութը կարող է տրվել մյուս պատաստանյութերի, օրինակ՝ գրիպի կամ սեռական ճանապարհով փոխանցվող վարակի (HPV) դեմ պատվաստանյութի հետ միաժամանակ:
- Պատվաստումն **անվճար է**, անգամ եթե չունեք ապահովագրություն:
- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:



## ԻՆՉՈ՞Ւ ԴԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ


- Պատվաստվելը **ձեզ պաշտպանելու** լավագույն միջոցն է: Եթե դուք վարակվում եք COVID-19-ով, դուք կարող եք վիրուսը փոխանցել ուրիշներին, նույնիսկ եթե ձեզ մոտ հիվանդությունը չի դրսևորվում:
- Շատ երիտասարդներ, ովքեր հիվանդանում են COVID-19-ով, ունենում են թեթև ախտանիշներ կամ ախտանիշներ չեն ունենում, սակայն ոմանք ծանր հիվանդանում են կամ ունենում են երկարատև առողջական խնդիրներ:
- Պատվաստվելն ավելի ապահով կդարձնի սպորտով զբաղվելը, ընկերների հետ ժամանակ անցկացնելը կամ ընտանիքին այցելելու նպատակով ճանապարհորդելը:
- Որոշ դպրոցներ պահանջելու են դա:



## ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

COVID-ի դեմ պատվաստանյութերը հասանելի են բազմաթիվ բուժհաստատություններում, կլինիկաներում, դպրոցներում և դեղատներում: Այցելեք **VaccinateLACounty.com**՝ ձեզ մոտիկ գտնվող պատվաստման վայր գտնելու համար: Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, համոզվեք, որ նրանք ունեն **Pfizer** պատվաստանյութը և հարցրեք, թե ինչպես պետք է տրվի ծնողի/խնամակալի համաձայնությունը: Եթե գտնվում եք խնամատարության ներքո (foster care), ձեր խնամակալը կամ խմբային բնակավայրի աշխատակիցը կարող է տալ համաձայնություն (consent), եթե դուք համաձայն եք:

Չանգահարեք Հանրային Առողջության Վարչության Պատվաստման Չանգերի Կենտրոն **833-540-0473** կամ **2-1-1** հեռախոսահամարներով, եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն՝ պատվաստանյութ գտնելու, պատվաստման վայր փոխադրվելու կամ տնային պատվաստում պատվիրելու համար:





# COVID-19-ի դեմ Պատվաստում

## Ի՞նչ Պետք Է Իմանան Երեխաները

### ՈՐՈ՛ՆՔ ԵՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կողմնակի ազդեցությունները տարածված են և ցույց են տալիս, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն**:
- Դրանք կարող են ներառել ձեռքի ցավ կամ կարմրություն, հոգնածության զգացողություն, ջերմություն, դող, գլխացավ կամ մկանային ցավ: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ: Դրանք պետք է անհետանան մեկ կամ երկու օրվա ընթացքում:



### ԱՐԴՅՈ՞Ք COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՆ

#### Այո՛:

- COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութը մանրակրկտորեն վերահսկվել և փորձարկվել է: Այն անվտանգ և արդյունավետ է երեխաների/պատանիների համար: Թույլտվություն ստանալուց հետո **12-ից 17 տարեկան միլիոնավոր** երեխաներ/պատանիներ ապահով կերպով պատվաստվել են այդ պատվաստանյութով:
- Ճանր պլեբիլի հակազդեցություն (անաֆիլաքսիա) կարող է դրսևորվել ցանկացած պատվաստանյութից հետո, ներառյալ COVID-19-ի դեմ պատվաստանյութը, սակայն դա **հազվադեպ** է տեղի ունենում:
- Pfizer պատվաստանյութով պատվաստվելուց հետո քիչ թվով մարդիկ՝ հիմնականում արական սեռի պատանիներ և երիտասարդներ, ունեցել են սրտամկանի կամ սրտապարկի բորբոքում (միոկարդիտ և պերիկարդիտ): Այս իրավիճակը հազվադեպ է պատահում, իսկ դեպքերի մեծ մասը ընթանում է մեղմ, և մարդիկ լավ են արձագանքում բուժմանը և հանգստին: Միոկարդիտի կամ սրտի այլ հիվանդությունների վտանգը ձեզ համար շատ ավելի մեծ կլինի, եթե վարակվեք COVID-19-ով: Երկրորդ դեղաչափն ավելի ուշ ստանալը (8 շաբաթ հետո) նույնպես նվազեցնում է սրտամկանի բորբոքման (միոկարդիտ) դեպքերը:
- Դուք պատվաստանյութից **չեք կարող վարակվել COVID-19-ով**: Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուսը:
- Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութն ազդում է պատանիների զարգացման կամ երեխաներ ունենալու կարողության վրա:



### ՆԱԽԵԱՆ ՁԵՐ ՊԱՏՎԱՍՏՎԵԼԸ

- Խոսքը ձեր բժշկի, ծնողի/ խնամակալի կամ այլ վստահելի մեծահասակի հետ COVID-19-ի դեմ պատվաստման մասին: Ուղղեք նրանց ցանկացած հարց, որը կարող է ծագել ձեզ մոտ:
- Հավաստիացեք, որ պատվաստման կլինիկան, որը դուք պատրաստվում եք գնալ, տրամադրում է Pfizer պատվաստանյութը:
- Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, անպայման ձեռք բերեք **ծնողի/խնամակալի համաձայնությունը**:

